## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼՈՎ ՀԱՅՏԱԳՐՎՈՂ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ

Գնահատման և թեստավորման կենտրոնը **ս.թ. հունիսի 26-ից սկսել է 2023 թվականի բուհերի ընդունելության երրորդ փուլի** հայտագրման գործընթացը:

Բուհերի ընդունելության հայտագրման երրորդ փուլին կարող են մասնակցել՝

ա) Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատությունների տվյալ ուսումնական տարվա և նախորդ տարիների շրջանավարտները, օտարերկրացիները, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունների տվյալ ուսումնական տարվա շրջանավարտ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնց ատեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու» առարկան ատեստավորված չէ, և միասնական քննությունները (բացառությամբ «Հայոց պատմություն» և օտար լեզուների) ցանկանում են հանձնել ռուսերեն թարգմանությամբ թեստերով

բ) տվյալ տարվա մինչև **հուլիսի 31-ը զորացրվող** զինծառայողները

գ) հիվանդության պատճառով միասնական քննությունն ընդհատած, ինչպես նաև բողոքարկման հանձնաժողովի որոշմամբ երրորդ փուլի միասնական քննությանը թույլատրված դիմորդները

Երրորդ փուլի դիմորդները ընդունելության դիմում-հայտը լրացնելու համար դիմում են իրենց բնակության վայրին մոտ **ԳԹԿ-ի կողմից** **<u>առանձնացված դպրոց</u>**՝ անձնական համար ստանալու: Դպրոցը դիմորդներին օժանդակում է դիմում-հայտերի լրացման ընթացքում:

Ընդունելության դիմում-հայտի համար անհրաժեշտ է՝

- 3x4 չափի լուսանկարի էլեկտրոնային տարբերակը,
- անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճենը,
- ՀՀ ֆինանսների նախարարությունում Գնահատման և թեստավորման կենտրոնի **900018003401** հաշվեհամարին յուրաքանչյուր քննության համար փոխանցել 1500 (հազար հինգ հարյուր) դրամ:

Միասնական, ներբուհական քննությունների վճարից ազատվում են՝

- պարտադիր ժամկետային ծառայությունից զորացրված անձինք,
- 1-ին և 2-րդ խմբերի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամները,
- ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները,
- առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան անձինք:

Վերոգրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին համապատասխանաբար կցում են զինվորական գրքույկի պատճենը, հաշմանդամության տեղեկանքի պատճենը, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության և ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից տրված տեղեկանքների պատճենները, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի պատճենները:

**Բուհերի ընդունելության հայտագրման երրորդ փուլի գործընթացը կավարտվի հուլիսի 1-ին, ժամը17:00-ին:**

Երրորդ փուլի դիմորդների միասնական քննությունների անցաթղթերը Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից փոխանցվելու են առանձնացված դպրոցներ և դիմորդի էլեկտրոնային հասցեին:

<< Գնահատման և թեստավորման կենտրոն>>

պետական ոչ առևտրային կազմակերպություն

***Հավելված***

| | |
|---|---|
| **Երևան** | Թիվ 65 ավագ դպրոց (Շենգավիթ) |
| | Թիվ 16 ավագ դպրոց (Էրեբունի, Նուբարաշեն) |
| | Թիվ 114 ավագ դպրոց (Կենտրոն, Նորք-Մարաշ) |
| | Թիվ 54 ավագ դպրոց (Արաբկիր) |
| | Թիվ 190 ավագ դպրոց (Մալաթիա-Սեբաստիա) |
| | Թիվ 62 ավագ դպրոց (Նոր Նորք) |
| | Թիվ 127 ավագ դպրոց (Քանաքեռ-Զեյթուն) |
| | Թիվ 118 ավագ դպրոց (Աջափնյակ, Դավթաշեն) |
| | Թիվ 170 ավագ դպրոց (Ավան, Առինջ) |
| **Կոտայքի մարզ** | Հրազդանի թիվ 13 ավագ դպրոց |
| | Աբովյանի թիվ 6 ավագ դպրոց |
| | Եղվարդի ավագ դպրոց |
| | Նոր Հաճնի ավագ դպրոց |
| | Բյուրեղավանի ավագ դպրոց |
| | Չարենցավանի ավագ դպրոց |
| **Գեղարքունիքի մարզ** | Գավառի ավագ դպրոց |
| | Սևանի ավագ դպրոց |
| | Մարտունու ավագ դպրոց |
| | Վարդենիսի ավագ դպրոց |
| | Ճամբարակի ավագ դպրոց |
| **Արագածոտնի մարզ** | Աշտարակի ավագ դպրոց |
| | Թալինի ավագ դպրոց |
| | Ապարանի ավագ դպրոց |
| | Ծաղկահովիտի միջն. դպրոց |
| **Վայոց ձորի մարզ** | Եղեգնաձորի ավագ դպրոց |
| | Ջերմուկի կրթահամալիր դպրոց |
| | Վայքի ավագ դպրոց |
| **Արարատի մարզ** | Արտաշատի ավագ դպրոց |
| | Արարատի ավագ դպրոց |
| | Մասիսի ավագ դպրոց |
| **Սյունիքի մարզ** | Կապանի թիվ 9 ավագ դպրոց |

| | |
|---|---|
| | Մեղրու թիվ 1 միջն. դպրոց |
| | Գորիսի թիվ 4 ավագ դպրոց |
| | Սիսիանի ավագ դպրոց |
| **Լոռու մարզ** | Վանաձորի թիվ 5 ավագ  դպրոց |
| | Ալավերդու թիվ 5 հիմն. դպրոց |
| | Սպիտակի ավագ դպրոց |
| | Ստեփանավանի ավագ դպրոց |
| | Տաշիրի ավագ դպրոց |
| **Շիրակի մարզ** | Գյումրու թիվ 2 ավագ դպրոց (Գյումրի, Ախուրյան) |
| | Արթիկի թիվ 3 ավագ դպրոց |
| | Մարալիկի թիվ 1 միջն. դպրոց |
| | Աշոցքի միջն. դպրոց |
| | Ամասիայի միջն. դպրոց |
| **Արմավիրի մարզ** | Արմավիրի թիվ 4 ավագ դպրոց |
| | Վաղարշապատի թիվ 2 ավագ դպրոց |
| | Մյասնիկյան գյուղի միջն. դպրոց |
| **Տավուշի մարզ** | Իջևանի ավագ դպրոց |
| | Դիլիջանի ավագ դպրոց |
| | Նոյեմբերյանի ավագ դպրոց |
| | Բերդի ավագ դպրոց |